ՀԱՅՈՑ ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Համալսարանն էր, որտեղ արդեն այդ ժամանակ գործում էր ականավոր հայ գիտնականների մի ամբողջ համաստեղություն: Նրանք կրթություն էին ստացել Ռուսաստանի և արտասահմանյան երկրների առաջատար համալսարաններում: Որոշակի գիտական աշխատանք էր կատարվում Արվեստի և գիտության ինստիտուտում, որ կազմակերպվել էր Երևանում 1925 թ.:

Հայաստանում գիտական կյանքն ավելի աշխուժացավ հետագա տարիներին, երբ խումբ գործունեություն ծավալեցին նոր բարձրագույն ուսումնական հաստատությունները և կազմակերպվեցին առաջին ճյուղային գիտահետազոտական հիմնարկները: Որակավորված աշխատողների և գիտական կադրերի պատրաստման [illegible], հատուկ ուշադրություն դարձվեց հատկապես ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների գծով կադրերի պատրաստման վրա: Մոսկվայի և Լենինգրադի, իսկ երեսնական թվականներից ի վեր նաև Երևանի բուհերին առընթեր ասպիրանտուրայում սովորում էին հարյուրավոր շրջանավարտներ, որոնք հաջողությամբ ավարտելով ուսումը և գիտական որակավորում ստանալով, համալրեցին հանրապետության գիտաուսումնական հաստատությունների աշխատակիցների շարքերը: Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացումը, ինչպես և գիտական երիտասարդության մասնագիտական պատրաստվածությունն ու աճը նախադրյալներ ստեղծեցին 1935 թ. Երևանում կազմակերպել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղը (Արմֆան): Գիտական այդ կենտրոնը ղեկավարում էր ականավոր գիտնական-երկրաբան, ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսինգը, որը մինչ այդ արդեն եղել էր Հայաստանում, զբաղվել այստեղ երկրաբանական պրոբլեմների ուսումնասիրությամբ: 1938 թ. Արմֆանի նախագահ ընտրվեց հանրահայտ գիտնական, ակադեմիկոս Հ. Օրբելին:

ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի անմիջական օգնությամբ Արմֆանում սկսվեց ժամանակակից գիտության հիմքերի ձևավորումը: Հասարակական գիտություններին, մասնավորապես հայագիտական հետազոտությունների գծով կատարվող աշխատանքներին զուգընթաց նախապատերազմյան շրջանում հանրապետությունում մեծ աշխատանք կատարվեց քիմիական, երկրաբանական, կենսաբանական, գյուղատնտեսական և բժշկական գիտությունների բնագավառներում: Հատկանշական է նաև այն սերտ կապը, որը ստեղծվեց գիտահետազոտական հիմնարկների և արտադրական ձեռնարկությունների միջև. հանրապետության ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման շատ հարցեր հաճախ իրենց լիարժեք պատասխանն էին գտնում տեղում կատարվող գիտական հետազոտությունների շնորհիվ:

Արմֆանում կատարվող գիտահետազոտական աշխատանքների ընդհանուր արդյունքները ամփոփվեցին Երևանում, 1940 թ. դեկտեմբերին տեղի ունեցած գիտական նստաշրջանում: Գիտական զեկուցումներով հանդես եկան ակադեմիկոսներ Լևոն Օրբելին, Հովսեփ Օրբելին, Հակոբ Մանանդյանը, ԽՍՀՄ ԳԱ թղթակից անդամ Էզրաս Հասրաթյանը, հանրապետության գիտական մտքի երիտասարդ ներկայացուցիչներ: Մեծ հետաքրքրություն առաջացրին նաև ռուս նշանավոր գիտնական-ակադեմիկոսների՝ պատմաբան Բորիս Գրեկովի և մեքենաշինարար Եվգենի Չուդակովի զեկուցումները: Նստաշրջանը ցույց տվեց, որ Արմֆանում գիտական կադրերի աճի շնորհիվ ձեռնարկվել են կարևոր նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ, որոնք աչքի են ընկնում ինչպես մտահղացման ու կատարման յուրօրինակությամբ, այնպես էլ գիտության տվյալ ճյուղի առանցքային հարցերի լայն ընդգրկումներով:

1930-ական թթ. երկրորդ կեսին Արմֆանի գործունեությունը համընկնում է ժամանակի առումով այն շրջանի հետ, երբ երկրով մեկ ծավալվել էին բռնություններ և օրինազանցություններ, որոնց զոհ դարձան գիտական շատ աշխատողներ: Ռեպրեսիայի ենթարկվեցին Հրաչյա Աճառյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը, Ստեփան Ղամբարյանը, Միհրան Հակոբյանը, Հովհաննես Նավակատիկյանը, Ներսիկ Ստեփանյանը, Արշակ [illegible] և շատ ուրիշներ:

Այսպիսով, Հայաստանի գիտությունների ակադեմիայի ստեղծման նախադրյալները ունեին և՛ դրական, և՛ բացասական կողմեր: Միաժամանակ պետք է նշել, որ հայկական ակադեմիան իր առանձնահատկություններով չէր կարող չտարբերվել այդ ժամանակ արդեն գործող, կամ հետպատերազմյան առաջին տարիներին ստեղծված միութենական հանրապետական մյուս ակադեմիաներից:

Հայաստանի Ժողկոմխորհի հայտնի որոշմամբ ստեղծվեց կառավարական հատուկ հանձնաժողով, որի խնդիրն էր՝ միութենական ակադեմիայի նախագահության ներկայացուցչի հետ համատեղ մշակել և կառավարության քննարկմանը ներկայացնել Հայաստանի գիտությունների ակադեմիայի կազմը, գիտական հիմնարկների կազմակերպմանը և նյութատեխնիկական բազային վերաբերող հիմնահարցերը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին, հիմնադիր անձնակազմի համար՝ գիտական հիմնարկների, բուհերի գիտական խորհուրդների, ստեղծագործական կազմակերպությունների կողմից առաջադրվեց 44 թեկնածու: Ժողկոմխորհը 1943 թ. նոյեմբերի 25-ին լսելով կառավարական հանձնաժողովի առաջարկությունները, որոշեց հաստատել ակադեմիայի հիմնադիր կազմը՝ բաղկացած 23 անդամից (ակադեմիկոսներից): Ակադեմիան իր կազմի մեջ ընդգրկեց բնական և հասարակական գիտությունների գծով ականավոր գիտնականների, որոնք գերազանցապես ավագ սերնդի ներկայացուցիչներ էին և ակտիվ մասնակցում էին Հայաստանի գիտամշակութային կյանքին:

ՀՀ ԳԱԱ առաջին կազմի մեջ մտան Մանուկ Աբեղյանը (գրականագիտություն), Աբրահամ Ալիխանովը (ֆիզիկա), Արտեմ Ալիխանյանը (ֆիզիկա), Հրաչյա Աճառյանը (լեզվագիտություն), Հրաչյա Բունիաթյանը (կենսաքիմիա), Վարդան Գուլքանյանը (գենետիկա), Իվան Եղիազարովը (հիդրոէներգետիկա), Ալեքսանդր Թամամշևը (անասնաբուծություն), Միքայել Թումանյանը (գյուղատնտեսություն), Վաչե Իսագուլյանցը (քիմիա), Ավետիք Իսահակյանը (գրականություն), Սահակ Կարապետյանը (ֆիզիոլոգիա), Խաչատուր Կոշտոյանցը (ֆիզիոլոգիա), Ալեքսանդր Հակոբյանը (թերմոդինամիկա), Վիկտոր Համբարձումյանը (աստղաֆիզիկա), Լևոն Հովհաննիսյանը (բժշկագիտություն), Գրիգոր Ղափանցյանը (լեզվաբանություն), Ստեփան Մալխասյանը (բանասիրություն), Հակոբ Մանանդյանը (պատմություն), Կոնստանտին Պաֆֆենհոլցը (երկրաբանություն), Արսեն Տերտերյանը (գրականագիտություն), Հովսեփ Օրբելին (արևելագիտություն) և Լևոն Օրբելին (ֆիզիոլոգիա):

Ժողկոմխորհը հաստատեց գիտությունների ակադեմիայի կանոնադրությունը:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի բացումը տեղի ունեցավ 1943 թ. նոյեմբերի 29-ին:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին պրեզիդենտ ընտրվեց Հովսեփ Օրբելին, փոխպրեզիդենտներ՝ Վարդան Գուլքանյանը և Վիկտոր Համբարձումյանը:

Անչափ մեծ են ԳԱԱ պրեզիդենտներ, ակադեմիկոսներ Հովսեփ Օրբելու և Վիկտոր Համբարձումյանի ծառայությունները Հայաստանի ԳԱ կազմավորման և հետագա գործունեության առումով: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին իր բացառիկ տաղանդի և հեղինակության շնորհիվ ապահովեց նորաստեղծ ակադեմիայի ամուր հիմքերի կառուցումը, իսկ աշխարհահռչակ գիտնական, Մեծ Հայ Վիկտոր Համբարձումյանը տասնամյակներ շարունակ գլխավորեց մեր գիտության կաճառը:

Երախտագետ հայ ժողովուրդը բարձր է գնահատում նրանց անուրանալի ծառայությունները, հպարտանում նրանցով:

Ժողովը սահմանեց, որ ակադեմիայի անձնակազմը բաղկացած է իսկական անդամներից (ակադեմիկոսներից), պատվավոր անդամներից և թղթակից անդամներից: Հետագայում ԳԱ կանոնադրությամբ սահմանվեց նաև «Հայաստանի գիտությունների արտասահմանյան անդամ» կարգավիճակը: Առաջին պատվավոր անդամ ընտրվեց նշանավոր ռուս բուսաբան աշխարհագետ, ԽՍՀՄ ԳԱ պրեզիդենտ Վլադիմիր Կոմարովը:

ԽՍՀՄ ԳԱ նախագահության անունից հիմնադիր ժողովում ելույթ ունենալով, ակադեմիկոս Բորիս Գրեկովը ողջունելով նորաստեղծ ակադեմիան, նշեց, որ հայ ժողովրդի՝ աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի մշակույթը դարեր շարունակ իր դրսևորումն է գտել զանազան եղանակներով, զանազան ձևերով, ապա ընդգծեց, որ պատմության ընթացքում հայ ժողովրդի հետաքրքրությունը հանդիսանում է նրա բնորոշ կողմերից մեկը:

Ակադեմիայում հիմնարար աշխատանք ծավալվեց գիտության ու տեխնիկայի հրատապ ուղղությունների գծով: Հատկապես նշանակալից և արգասավոր էին այն հետազոտությունները, որոնք սկսվեցին ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բնագավառում: Պատերազմի տարիներին այդ հետազոտությունները հիմնականում ուղղված լինելով ռազմաժամանակի պահանջները բավարարելու նպատակին՝ արտադրական ձեռնարկությունների առջև ծառացած գիտատեխնիկական ու կիրառական խնդիրների լուծմանը, միաժամանակ սկզբնավորեցին գիտական նոր ուղղություններ, որտեղ կատարվող առաջնային աշխատանքների արդյունքները հետագայում լայն ճանաչում գտան, դուրս եկան հանրապետության սահմաններից:

1945 թ. հուլիսին տեղի ունեցավ ՀԳԱ կազմի համալրման առաջին ընտրությունները: Ընտրվեցին 17 թղթակից անդամ: Վաստակաշատ, արդեն աշխատանքի երկարամյա փորձ ունեցող գիտնականների հետ միասին ակադեմիան համալրվեց գիտության տաղանդավոր երիտասարդ ներկայացուցիչներով. Արմեն Թախտաջյան, Արտաշես Շահինյան, Արմեն Նազարով, Միքայել Չայլախյան, Բարդուղիմեոս Ֆանարջյան և ուրիշներ: ՀԳԱ թղթակից անդամներ ընտրվեցին նաև արտասահմանում աշխատող հայ գիտնականներ. Փարիզի Պաստերի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, ականավոր մանրէաբան պրոֆեսոր Երվանդ Մանվելյան, ԱՄՆ-ի էլեկտրատեխնիկական հաշվարկների գծով խոշորագույն մասնագետներից մեկը՝ Արամ Բոյաջյանը:

1947 թ. ՀԳԱ պրեզիդենտ ընտրվեց Վիկտոր Համբարձումյանը, որը մինչ այդ, լինելով փոխպրեզիդենտ, գլխավորում էր նաև Նորաստեղծ Բյուրականի աստղադիտարանը: Որպես պրեզիդենտ Համբարձումյանը ղեկավարել է ակադեմիան մինչև 1993 թ. ապրիլը, ապա անցնելով թոշակի՝ ընտրվել է ՀՀ ԳԱԱ պատվավոր պրեզիդենտ: Համբարձումյանի անվան հետ են կապված ամենից առաջ այն հաջողությունները, որ ակադեմիան ձեռք է բերել իր գոյության վերջին տասնամյակների ընթացքում:

Գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը 1993 թ. ապրիլի 8-ին ընտրեց ՀՀ ԳԱԱ նոր ղեկավարություն:

ՀՀ ԳԱԱ-ն այժմ ունի 6 բաժանմունք՝ **ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**՝ միավորում է Մաթեմատիկայի ինստիտուտը, Բյուրականի աստղադիտարանը, Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը և նրա ավտոմատացման միջոցների Ղափանի փորձարարական գործարանը, Երևանի փորձնական գործարանը, ինստիտուտին առընթեր վերգետնյա գեոֆիզիկական սեյսմանախագուշակման համակարգերի ՀԿԲ-ն: **ՄԵԽԱՆԻԿԱՅԻ, ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**, որը միավորում է Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը, Մեխանիկայի ինստիտուտը, Ճարտարագիտական կենտրոնը, Կոմպոզիցիոն նյութերի ՀԿՏԲ, Հատուկ փորձակոնստրուկտորական տեխնոլոգիական ինստիտուտը, Վիբրոտեխնիկայի բաժինը: **ՔԻՄԻԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**, որը միավորում է Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը և նրա փորձնական գործարանը, Օրգանական քիմիայի ինստիտուտը, Կենսաքիմիայի ինստիտուտը, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը և նրա հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրոն, Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, Էկոլոգոնոոսֆերային հետազոտությունների կենտրոնը, Երկրաֆիզիկայի և ինժեներական սեյսմաբանության ինստիտուտը, Գառնիի երկրաֆիզիկական դիտարանը:

ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ ընդգրկված են՝ Բուսաբանության ինստիտուտը և Բուսաբանական այգին, Կենդանաբանության ինստիտուտը և նրա կիրառական կենդանաբանության կենտրոնը, Միկրոբիոլոգիայի ինստիտուտը, Լ. Ա. Օրբելու անվան Ֆիզիոլոգիայի ինստիտուտը, Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը, Ագրոքիմիական պրոբլեմների և հիդրոպոնիկայի ինստիտուտը, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը, Ա. Լ. Մնջոյանի անվան Նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտը և նրա հատուկ քիմիադեղաբանական տեխնոլոգիական բյուրոն:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ միավորում է՝ Պատմության ինստիտուտը, Տնտեսագիտության ինստիտուտը, Հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Արևելագիտության ինստիտուտը, Հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը, Սփյուռքահայ համայնքների պատմության և մշակույթի բաժինը:

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ կազմում են՝ Փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտը, Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, Արվեստի ինստիտուտը, Սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնը, Փիլիսոփայության ամբիոնը, Օտար լեզուների ամբիոնները:

ՀՀ ԳԱԱ կազմի մեջ են մտնում նաև ավելի քան երկու տասնյակ հասարակական գիտական կազմակերպություններ՝ գիտական պրոբլեմային խորհուրդներ, ընկերություններ, բաժանմունքներ:

Ակադեմիայի գոյության 50 տարիների ընթացքում տեղի են ունեցել 18 ընտրություններ: Ընդհանուր առմամբ ընտրվել են՝ 108 իսկական անդամ և 161 թղթակից անդամ, 10 պատվավոր անդամ, 15 արտասահմանյան անդամ: Առ այսօր ակադեմիայի կազմում կան 41 իսկական անդամ, 64 թղթակից անդամ, 4 պատվավոր անդամ, 10 արտասահմանյան անդամ: Ակադեմիայի 2685 գիտական աշխատողներից 802-ը գիտության դոկտորներ են, 1885-ը՝ գիտության թեկնածուներ, այսինքն գիտական աստիճան ունեցող գիտական աշխատողները կազմում են 62,8 տոկոս: Անցած տարիների ընթացքում ակադեմիայի ասպիրանտուրան ավարտել է 2715 մարդ, ընդ որում, ավելի քան 800 ասպիրանտներ գործուղումով սովորել և ավարտել են Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կիևի, երկրի մի շարք այլ վայրերի առաջատար գիտական հիմնարկների ասպիրանտուրաները: Վերջին 50 տարիների ընթացքում ակադեմիայի համակարգում գործող գիտական աստիճաններ շնորհող մասնագիտացված գիտական խորհուրդներում թեկնածուական աստիճան է շնորհվել 2530 հայցվորի:

Որպես հանրապետության գիտական մտքի գլխավոր կենտրոն, ԳԱԱ-ն համագործակցում է գիտաճյուղային ինստիտուտների և բուհերի հետ գիտահետազոտական աշխատանքների կատարման հարցերում: Վճռական է ակադեմիայի ներդրումը այն բանում, որ Հայաստանում «մշտական գրանցում» են ստացել ֆիզիկամաթեմատիկական, տեխնիկական, բնական գիտությունների այնպիսի ժամանակակից ճյուղեր, ինչպիսիք են՝ աստղաֆիզիկան, մաթեմատիկան, ֆիզիկան, էլեկտրատեխնիկան, ռադիոֆիզիկան, էլեկտրոնիկան, մեխանիկան, հաշվողական տեխնիկան և ավտոմատացման համակարգերը, քիմիան, նուրբ օրգանական քիմիան, ֆիզիկական քիմիան, անօրգանական քիմիան, կենսաքիմիան, երկրաբանությունը, սեյսմաբանությունը, ֆիզիոլոգիան, բուսաբանությունը, կենդանաբանությունը, միկրոբիոլոգիան, ագրոքիմիան և այլն:

Ակադեմիայի մասնակցությամբ Հայաստանում կազմակերպվել են գունավոր մետալուրգիայի, էլեկտրատեխնիկայի, մեքենաշինության, քիմիական տեխնոլոգիայի, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, սարքաշինության, [illegible] տեխնիկայի, մանրէաբանության, հիդրոտեխնիկական կառույցների մի շարք ճյուղային արտադրություններ, որոնք կարևոր տեղ ունեն հանրապետության ժողովրդական տնտեսության համալիրի մեջ, շատ խոշոր ձեռնարկությունների ստեղծման հետ կապված գիտական հիմնահարցերի լուծման մեջ:

Հայ ժողովրդի մշակութային հարուստ ժառանգությունը, Հայկական լեռնաշխարհում, ինչպես և աշխարհի տարբեր մասերում նրա կերտած նյութական ու հոգևոր մշակույթի հուշարձանները հիմք հանդիսացան հայագիտության և առհասարակ հասարակական գիտությունների զարգացման համար:

ՀԳԱ-ի համակարգում գիտականորեն մշակվեցին հայ ժողովրդի պատմական անցյալի և նորագույն ժամանակների պատմության, լեզվի, գրականության, արվեստի, տնտեսագիտության, փիլիսոփայության պրոբլեմները:

Հայաստանի ակադեմիայի գիտական հիմնարկները տասնամյակներ շարունակ աշխատել են սերտ համագործակցությամբ Մոսկվայի, Ս. Պետերբուրգի, Կիևի, Թբիլիսիի, Բաքվի, Մինսկի, Վիլնյուսի, Ռիգայի, Տալլինի, Քիշնևի, Տաշքենդի, Ալմա Աթայի, Աշխաբադի, Դուշանբեի, Բիշքեկի և ԽՍՀՄ մյուս գիտական կենտրոնների գիտնականների հետ:

Ընդլայնվել են ակադեմիայի միջազգային կապերը: Գիտական համագործակցության պայմանագրեր են կնքվել Գերմանիայի, Հունգարիայի, Մեծ Բրիտանիայի և Իսրայելի գիտական կենտրոնների հետ, աշխատանքներ են տարվում սերտ կապեր ստեղծելու Ֆրանսիայի, Մեքսիկայի, Արգենտինայի և մի շարք այլ երկրների ակադեմիաների հետ: Արտասահմանյան գիտական կազմակերպությունների հետ գիտական կապեր են հաստատել ԳԱԱ շատ ինստիտուտներ, մեր գիտական աշխատողները մասնակցում են տարբեր երկրներում տեղի ունեցող միջազգային գիտական համաժողովներին, կոնֆերանսներին, գիտական նստաշրջաններին:

ՀՀ ԳԱԱ-ն գիտական կապերի ու համագործակցության պայմանագրեր է կնքել Ռուսաստանի, Ուկրաինայի և այլ ակադեմիաների հետ, դարձել գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի անդամ:

Անվիճելի են այն հաջողությունները, որ իր 50-ամյա գործունեության ընթացքում գիտության զարգացման բնագավառում ձեռք է բերել ՀՀ ԳԱԱ-ն: Սակայն ճիշտ չէր լինի ամեն ինչ պատկերել պայծառ գույներով և մոռացության տալ այն բացթողումները, թերությունները, անգամ աններելի սխալները, որ տեղ են գտել ակադեմիայի գործունեության մեջ: Դրանց մի մասը, անշուշտ, ունի օբյեկտիվ պատճառներ, կարելի է բացատրել Հայաստանի երկրորդ Հանրապետության վերջին տասնամյակների, այս կամ այն բնագավառում ստեղծված իրադրությամբ, բայց քիչ չեն նաև այնպիսիները, որոնք գալիս են ԳԱԱ նախագահության, բաժանմունքների բյուրոների, ինստիտուտների ղեկավարությունների ոչ ճիշտ [illegible] պաց, ՀՀ տնտեսական, մշակութային, քաղաքական հետագա զարգացման գիտական պահանջները արտացոլող գործունեությունից: Խիստ կենտրոնացված ղեկավարությունը, որը գիտության կազմակերպման նախնական շրջանում ինչ-որ չափով կարելի էր արդարացնել, հետագայում այնքան «կենտրոնացվեց», որ չէր կարող չծնել մարդկանց նախաձեռնությունը կաշկանդող իրավիճակ:

ՀՀ ԳԱԱ-ն գիտակազմակերպչական փոփոխությունների կարիք ունի: Մշակվել և կառավարության հաստատմանն է ներկայացվել ՀՀ ԳԱԱ նոր օրինադրության նախագիծը: Այն նախօրոք քննարկվել է ԳԱԱ բոլոր ինստիտուտներում, գիտական բաժանմունքներում և նախագահությունում, և ապա ակադեմիայի ընդհանուր ժողովում: Գաղտնիք չէ, որ ակադեմիայի գործունեությունը վերջին երեք տարիներում ընթանում էր նոր իրադրության մեջ: 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության անկախության հռչակագիրը, հիմնադրվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը, հայ ժողովուրդը ստեղծեց իր անկախ պետությունը, բռնեց իր ազատ զարգացման ուղին: Այդ ուղին անցնելիս գիտությունն այն անփոխարինելի միջոցներից մեկն է, որի օգնությամբ միայն հնարավոր է հասնել ազգային մեծ նպատակին՝ ստեղծել անկախ ժողովրդավարական պետություն:

Հայաստանում գիտության հետագա զարգացման նկատմամբ հոգատարությամբ է տոգորված Հայաստանի Հանրապետության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի 1993 թ. մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի մասին» հրամանագիրը: Հրամանագրով Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիան վերանվանվել է՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա, սահմանվել է, որ ակադեմիան պետության կողմից հովանավորվող, ինքնակառավարվող գիտական հաստատություն է, որը միավորում է Հայաստանի գիտությունների ակադեմիայի անդամներին, համակարգի գիտաշխատողներին և արտասահմանյան անդամներին, կոորդինացնում է հանրապետությունում հիմնարար գիտական հետազոտությունները: Ակադեմիան հանրապետության իշխանությունների պաշտոնական գիտական խորհրդատուն է, որի կողմից ներկայացված երաշխավորությունները ու առաջարկությունները ենթակա են պարտադիր քննարկման պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից:

Ակադեմիայի մասին Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագիրը նոր, պատասխանատու խնդիրներ է դնում ակադեմիայի անդամների, նրա բոլոր աշխատակիցների առջև:

ՀՀ ԳԱԱ հիսնամյակը պարտավորեցնող է: Այն ոչ միայն հարգանքի տուրք է գիտության [illegible], անցյալի արարումներին, այլ նաև նոր մեկնարկ հայկական ակադեմիական գիտությունը նոր հորիզոններ հասցնելու համար:

ՀՀ ԳԱԱ-ն կանի հնարավոր ամենը, որպեսզի ապահովի Հայաստանի Հանրապետության ժողովրդական տնտեսության գիտական սպասարկման ժամանակակից մակարդակը, իր մնայուն ներդրումը կատարելով հայ ժողովրդի հետագա բարգավաճման, նրա պետության տնտեսական, մշակութային, քաղաքական ու ռազմական հզորության ամրապնդման գործում:

[illegible]



[illegible]

ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

[illegible]

ՄՏՔԻ ԿԵՆՏՐՈՆԸ

[illegible]

[illegible]

կանության և արվեստի թանգարանի գիտական խորհուրդը նա Մ. Սարյանի թեկնածությունն է առաջադրում: Թեկնածությունը միահամուռ պաշտպանում են գիտական մի շարք կոլեկտիվներ և նշանավոր անհատներ: Սարյանի մտերիմ ընկեր և ջերմ բարեկամ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը ընդգծում է, որ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի ստեղծագործության «գեղարվեստական արժեքը, [illegible] և ճշմարտացիությունը դուրս են գալիս կերպարվեստի սահմաններից»:

Բարձր գնահատելով Մարտիրոս Սարյանի հզոր արվեստի գիտական խորիմաստությունը, Ավետիք Իսահակյանը դեռևս 1924 թ. գրել-

րյունը ճանաչում իրեն: Ես դրանում է մարդու մեծագույն երջանկությունը: Վիթխարի, անվերջ բնությունը և, փոքրիկ կյանքը, որն իր մեջ կրում է այդ անսահման մեծությունը...»:

Սարյանը իմաստուն մարդ էր, մեծ մտածող, ամեն մի հանդիպում նրա հետ հարստացնում էր զրուցակցի հոգին, օգնում ըմբռնելու արվեստի իմաստը: Արվեստը, ասում էր Վարպետը, մարդու կամքի արտահայտության, նրա անմահության ձգտման անփոխարինելի գանձն է:

Աշխատել մարդկության համար, հանուն մարդու, այս էր Սարյանի իմաստալից կյանքի նշանաբանը:

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ
Ակադեմիկոս

[illegible] հանդիպումներից մեկը:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամներ են ընտրվել՝ Միհրան Ագաբաբյանը (ԱՄՆ), Արամ Բոյաջյանը (ԱՄՆ), Գաստոն-Գառնիկ Զոլումյանը (Ֆրանսիա), Ռոբերտ Գյուլբենկյանը (Պորտուգալիա), Արմեն Ալչյանը (ԱՄՆ), Երվանդ Թերզյանը (ԱՄՆ), Զատիկ Խանզադյանը (Ֆրանսիա), Ռիչարդ (Տիգրան) Հովհաննիսյանը (ԱՄՆ), Մանասե Սևակը (ԱՄՆ), Ժան Պիեռ Մահեն (Ֆրանսիա), Իտա Մոտոսամա (Ճապոնիա), Երվանդ Մանվելյանը (ԱՄՆ), Էդմոնդ Շյուտց (Հունգարիա), Սիրարփի Տեր-Ներսեսյանը (ԱՄՆ), Չարլզ Հրաչ Փափազը (ԱՄՆ):

ԱՐԱՄ ԲՈՅԱՋՅԱՆ

Ծնվել է 1888 թ. մարտի 15-ին Տալաս գյուղում (Անատոլիա), վախճանվել է 1949-ին՝ Պիտսֆիլդ (ԱՄՆ):

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ 1945-ից, էլեկտրատեխնիկ, էլեկտրական մագնիսական դաշտի տեսության և էլեկտրական մեքենաների տեսության բնագավառների նշանավոր մասնագետ: Նրա հետազոտությունները ու աշխատությունները կարևոր դեր են խաղացել էլեկտրական մեքենաների արդի տեսության մշակման գործում և մեծ ազդեցություն են թողել գիտության ու տեխնիկայի հետագա զարգացման վրա: Ավարտել է Սվարթմորի քոլեջը (1915): Աշխատել է «Ջեներալ էլեկտրիկ քոմպանի» ընկերությունում, մասնագիտանալով էլեկտրական շղթաների տեսության մեջ:

ԶԱՏԻԿ ԽԱՆԶԱԴՅԱՆ

Ծնվել է 1886 թ. ապրիլի 8-ին Զմյուռնիայում: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է 1967 թվից:

Ֆրանսահայ ինժեներ-հիդրոլոգ, աշխարհագետ, քարտեզագետ: Հեղինակ է 25 քարտեզներից կազմված «Պատմական Հայաստանի աշխարհագրական միասնության ատլասի» (1920): Ավարտել է Փարիզի նավագնացության բարձրագույն և Ֆրանսիայի ռազմածովային ուժերի գլխավոր շտաբի դպրոցները, ստացել կոմանդորի կոչում: Մասնակցել է Փարիզի հաշտության կոնֆերանսի նախապատրաստական աշխատանքներին (1919), եղել է Սևրի Մուրադ-Ռափայելյան վարժարանի աշխարհիկ տնօրենը (1930—1955): Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին մասնակցել է ֆրանսիական դիմադրական շարժմանը:

Ֆրանսահայ մշակութային միության պատվավոր նախագահ, 1966—1980-ին՝ Ֆրանսիա—ԽՍՀՄ ընկերության անդամ:

ՌԻՉԱՐԴ (ՏԻԳՐԱՆ) ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Ծնվել է 1932 թ. նոյեմբերի 9-ին, ԱՄՆ-ի Թուլեր քաղաքում (Կալիֆոռնիա):

Ականավոր պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր (1965), պրոֆեսոր (1972), Հայաստանի և Միջին Արևելքի նորագույն պատմության մասնագետ: ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է 1990 թ.: Կրթությունը ստացել է Բերկլիի և Լոս-Անջելեսի համալսարանում: Ավելի քան երկու տասնամյակ զբաղվում է Հայաստանի XX դարի սկզբնաշրջանի պատմությամբ, մասնավորապես Հայաստանի Հանրապետության կազմավորման պատմության, նրա դիվանագիտական հարաբերությունների համակարգում նրա միջազգային դրության և նշանակության հարցերով: Այդ պրոբլեմներին են նվիրված նրա լայն ճանաչում գտած «Հայաստանի անկախության ճանապարհին» (ունեցել է չորս հրատարակություն, 1967, 1969, 1974, 1984), «Հայաստանի Հանրապետությունը» (երկու հատորով, հ. 1, 1971, 1974, 1982, հ. 2, 1982) անգլերեն լեզվով հրատարակած մենագրությունները, բազմաթիվ ուսումնասիրությունները: Նրա աշխատությունները ստեղծվել են աղբյուրագիտական հարուստ նյութերի, վավերագրերի վրա, որոնց զգալի մասը առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել հեղինակի կողմից: Ռիչարդ Հովհաննիսյանի աշխատությունների մեջ ծանրակշիռ տեղ են գրավում հայերի 1915 թվականի մեծ ցեղասպանությունը, Հայկական հարցին նվիրված աշխատությունները: Նշանավոր են նրա «Հայկական ջարդերը» (1980 թ.), «Հայկական ցեղասպանությունը հեռանկարում» (1986), մենագրությունները: Ուշագրավ է նրա «Հայկական դիմագիծը պատմության և գրականության մեջ» (1980) ուսումնասիրությունը: ՀՀ ԳԱԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի կենտրոնը 1992-ին հրատարակել է Ռիչարդ Հովհաննիսյանի կենսամատենագիտությունը, որը ամբողջական պատկերացում է տալիս գիտնականի հետազոտական գործունեության, հայ ժողովրդի պատմության հիմնահարցերի լուսաբանության վերաբերյալ:

Պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանը նշանավոր հայագետ է, նրա ակտիվ ջատագովը: Նա ջերմ հայրենասեր է, հայ ժողովրդի պատմության խոր գիտակ:

ՄԱՆԱՍԵ ՍԵՎԱԿ (ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ)

Ծնվել է 1897 թ. Սիս-Կիլիկիա, վախճանվել է 1967 թ. նոյեմբերի 23-ին Ֆիլադելֆիայում՝ ԱՄՆ:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ՝ 1960 թ.: Նյու-Յորքի գիտությունների ակադեմիայի անդամ՝ 1952 թ.: Ամերիկահայ կենսաքիմիկոս, մանրէաբան: Հասարակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս: Նրա հիմնական հետազոտությունները նվիրված են նուկլեինաթթուների և սպիտակուցների նյութափոխանակության հարցերին: Նա մշակել է քլորաֆորմի միջոցով այդ նյութերի ստացման ու մաքրման այժմ լայնորեն կիրառվող մեթոդը: Մանասե Սևակի գիտական աշխատությունները դարձել են իմունիտետի կենսաքիմիական [illegible] հանելուկների, դեղամիջոցների նկատմամբ ախտածին մանրէների դիմադրողականության ուսումնասիրությունների հիմք:

Ավարտել է Տարսոնի (Կիլիկիա) հայկական դպրոցը: 1920-ին տեղափոխվել է ԱՄՆ: 1927-ին ավարտել է Եյլի, իսկ 1930-ին՝ Կոլումբիայի համալսարանները: Իբրև Ռոկֆելերյան թղթակից 1931—1935 թթ. [illegible] (1939—67), [illegible]

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ

Ծնվել է 1896 թ. սեպտեմբերի 5-ին Կոստանդնուպոլսում:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է 1965 թ., արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր: Ավարտել է Սորբոնի համալսարանը (1925), ուսանել Ժնևի համալսարանում (1917—1919): Դասավանդել է Մասաչուսեթսի (ԱՄՆ) Վելսլի քոլեջում (1930—46), Սորբոնի (1925—29), Հարվարդի (1946—62), Եվրոպայի (1963-ից) և այլ առաջնակարգ համալսարաններում: Եղել է Վելսլի կոլեջի արվեստի կենտրոնի նախագահ, Ֆոգգ թանգարանի տնօրեն (1937—46), Հարվարդի համալսարանի Դոմբարտըն Օքս գիտահետազոտական կենտրոնի պատվավոր (1953—54) և ուսումնական գծով տնօրեն (1954—1955, 1961—62):

Ընտրվել է մի շարք ակադեմիաների, այդ թվում ԱՄՆ-ի համալսարանական կանանց ասոցիացիայի (1948) և միջնադարյան ակադեմիայի (1971), բրիտանական ակադեմիայի (1975), Ֆրանսիայի հնագետների ազգային ասոցիացիայի (1971) և արձանագրությունների և գեղարվեստական գրականության ակադեմիայի (1978) թղթ.անդամ, ԱՄՆ-ի Վիլսոն (1948) և Սմիթ (1957) կոլեջների պատվավոր անդամ: Սիրարփի Տեր-Ներսեսյանը Անանիա Շիրակացի (Հայաստան, 1982), Ֆրանսիայի արձանագրությունների ու գեղարվեստական գրականության ակադեմիայի Շլումբերժեի (1968) և Ֆուլդի (1987) անվան մրցանակների դափնեկիր է, պարգևատրվել է Անգլիայի հնագիտական ընկերության ոսկե մեդալով:

ԵՐՎԱՆԴ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Ծնվել է 1872-ին Կոստանդնուպոլսում, վախճանվել է 1949-ին, Փարիզում:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ՝ 1945, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, մանրէաբան, էպիդեմիոլոգ, վիրուսոլոգ:

1900-ին ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը: Աշխատել է Պաստերի անվան ինստիտուտում որպես պաթոլոգիական հյուսվածքաբանության և մանրէաբանության լաբորատորիայի վարիչ (1902—1949): Փարիզի համալսարանում ղեկավարել է հիստոլոգիայի և հիստոբակտերիոլոգիայի տեխնիկայի գործնական դասընթացները (1902—1949): Եղել է Ֆրանսիայի մանրէաբանների ասոցիացիայի անդամ:

ՀՐԱՉ (ՉԱՐԼԶ) ՓԱՓԱԶ

Ծնվել է 1918 թ. մարտի 29-ին:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է 1974 թ., ԱՄՆ-ի ԳԱԱ անդամ 1956 թ., փիլիսոփայության դոկտոր, էլեկտրամագնիսականության ասպարեզի խոշոր մասնագետ: Ավարտել է Մանչեստրի (ԱՄՆ) տեխնոլոգիական ինստիտուտը (1941), Կալիֆորնիայի տեխնոլոգիական ինստիտուտի պրոֆեսոր, անտենաների լաբորատորիայի վարիչ (1952): Նրա հիմնական հետազոտությունները վերաբերում են ալիքատարների և անտենաների տեսությանը և էլեկտրական մագնիսական շարժման ինվարիանտ հավասարումներին: Օգտվելով ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի ինվարիանտության հիմնարար սկզբունքներից, հաջողությամբ լուծել է գիտական մի շարք խնդիրներ ոչ գծային միջավայրերում էլեկտրական մագնիսական ալիքների տարածման վերաբերյալ:

[illegible]

— Նախ և առաջ երախտագիտության զգացումով նշեմ, որ մարդասիրական օգնությունը իրականացվում է Միացյալ [illegible]

— 1988 թ. մարտի 1-ից Ադրբեջանից բռնի տեղահանված այն անձանց, ովքեր հաշվառված են փախստականների պետական վարչությունում, ունեն «Փախստականի ընտանիքի քարտ» և «Փախստականի վկայական», կամ 1988-ի ձմռան հաշվառման թերթիկ:

«ԴՐՕՇԱԿ»-ի

— Մշտական գրանցում, մշտական բնակարան և [illegible]

— 1991 թ. [illegible]